

Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի Արտադրության Արձանագրություն: Հավելված J

Ուժի մեջ է՝ սկսած Երկուշաբթի, Ապրիլ 05, 2021

Վերջին Թարմացումները.

4/4/2021

- Տեղեկացնում է, որ այն արտադրությունները, որոնք նախատեսում են բացօթյա կենդանի միջոցառումներ կամ ներկայացումներ, պետք է հետևեն Բացօթյա Կենդանի Միջոցառումների և Ներկայացումների Նստելակարգի Արձանագրությանը:
- Տեղեկացնում է, որ պետք է ճաշել միայն ճաշելու համար նախատեսված վայրերում և հնարավորության դեպքում՝ դա պետք է տեղի ունենա բացօթյա տարածքներում:

COVID-19-ով վարակման դեպքերի, հոսպիտալացման և մահերի ցուցանիշները շարունակում են նվազել, սակայն շարունակում են մնալ միջին մակարդակում: COVID-19-ը շարունակում է բարձր վտանգ ներկայացնել համայնքների համար և պահանջում է, որպեսզի բոլոր մարդիկ և բիզնեսները ձեռնարկեն նախազգուշական միջոցառումներ և ձևափոխեն գործողությունները և զբաղմունքներն այնպես, որ նվազեցնեն տարածման վտանգը:

Քանի որ Լոս Անջելեսի Շրջանը մտել է Նահանգի Ավելի Ապահով Տնտեսության Նախագծի շրջանակի <<Նարնջագույն Կարգի>> (Orange Tier) մեջ, մշակվել է սույն Արձանագրությունը՝ կիրառելու տեղային գործունեությանը բնորոշ որոշ սահմանափակումներ: Բիզնեսները պետք է շարունակեն իրենց գործունեությունը՝ պահպանելով զգուշություն և հետևեն սույն արձանագրությամբ սահմանված պահանջներին՝ նվազեցնելու COVID-19-ի հնարավոր տարածումն իրենց բիզնեսի շրջանակներում:

Սույն արձանագրությունը և նրանում ներառված պահանջները հատուկ են Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի Արտադրությանը: Ի հավելումն Նահանգի կողմից Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի արտադրություններին առաջադրվող պայմանների, ինչպես նաև աշխատողների և ղեկավարների միջև ձեռք բերված համաձայնությունների, նմանատիպ բիզնես-ձեռնարկությունները նույնպես պետք է համապատասխանեն Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի արտադրության համար ստորև Ցանկում նշված պայմաններին:

Արտադրությունները, որոնք մեկանգամյա են, կամ գործում են սահմանափակ ժամանակով հատուկ իրադարձությունների կամ ներկայացումների համար, պետք է վերանայան ներկայացնեն իրադարձությունների անվտանգության ծրագիր՝ սահմանված իրադարձության օրվանից առնվազն 10 օր առաջ: Ծրագրերը պետք է ներկայացվեն Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ LiaisonCOVID19@ph.lacounty.gov: Անվտանգության ծրագիրը պետք է ներառի իրադարձության մանրամասն նկարագրություն, Հանրային Առողջապահության Վարչության Հավելված J Արձանագրության Ցանկը՝ լրացված, սխեմատիկ գծագրերը և ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը կարող է օգնել Հանրային Առողջապահության Վարչությանը ապահովել իրադարձության անվտանգ անցկացումը:

Արտադրությունները, որոնք նախատեսում են բացօթյա կենդանի միջոցառումներ կամ ներկայացումներ, պետք է հետևեն նաև ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության [Բացօթյա Կենդանի Միջոցառումների և Ներկայացումների Նստելակարգի Արձանագրությանը](#):

Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի ոլորտներին վերաբերող լրացուցիչ արձանագրությունները նույնպես պետք է պահպանվեն հետևյալ հաստատություններում.

- Ռեստորաններ և Բարեր
- Մանրածախ Գործունեություն
- Գրասենյակային Տարածքներ
- Պահեստներ և Արտադրություն
- Շինարարություն

Խնդրում ենք հաշվի առնել, որ սույն փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում, հետևաբար մի՛ մոռացեք կանոնավոր կերպով ստուգել Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> սույն փաստաթղթի վերաբերյալ յուրաքանչյուր թարմացման մասին իմանալու համար:

Սույն ցանկը անդրադարձ է կատարում հետևյալին՝

- (1) Աշխատակիցների առողջության պաշտպանությանն ուղղված աշխատավայրի գործունեության ծրագրեր և գործելակերպ
- (2) Ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկմանն ուղղված միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների և հանրության հետ
- (5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն, եթե ձեր հաստատությունը կիրառում է վերաբացման ցանկացած արձանագրություն:

Սույն արձանագրության մեջ հասցեագրված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև թվարկված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ այդ բիզնեսի համար:

Բիզնեսի Անունը՝

Հաստատության Հասցեն՝

Հրապարկման Ամսաթիվը՝

A. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ (ԸՆՏՐԵՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԿԻՐԱՌԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)



- ❑ Ցանկացած աշխատակից, ով կարող է իր աշխատանքային պարտականությունները կատարել տնից, պետք է աշխատի տնից:
- ❑ Աշխատավայրում պետք է նշանակվի/են COVID-19-ին Համապատասխանությունն Ապահովող Պատասխանատու Անձ(Կ19CO) կամ Պատասխանատու Անձինք: Կ19CO-ն պատասխանատու է COVID-19-ի անվտանգության արձանագրությունների կազմավորումը և դրանց կիրառումը ապահովելու, արձանագրությունների հիման վրա անձնակազմին վարժեցնելու և արձանագրությունների պահպանումը վերահսկելու համար: Հնարավորության դեպքում, վարակի վերահսկման ոլորտում փորձառու մասնագետների հետ պետք է անցկացվի խորհրդատվություն կազմելու և վերանայելու վարակի վերահսկման արձանագրությունները Երաժշտության, Հեռուստատեսության և Կինոյի արտադրությունների համար, վերանայելու հաստատված արձանագրությունները, և անցկացնելու ընդհանուր խորհրդատվություն CO19CO-ի հետ: Կ19CO-ն պետք է պահպանի, ապահովի և պաշտպանի իր աշխատանքի ընթացքում կատարված ցանկացած գրառման գաղտնիությունը: Կ19CO-ն պետք է հնարավորության դեպքում մշտապես գտնվի հաստատությունում, երբ իրականացվում է արտադրության հետ կապված աշխատանք մասնավորապես հաստատության տարածքում կամ տեղում նկարահանումների ժամանակ: Կ19CO-ն իրականացնում է հետևյալ գործառնությունները.
 - Աշխատակցի, ծառայություն մատուցողի և այցելուի առողջության ստուգում՝ նրանց աշխատավայր ժամանելուն պես: Գրառումները պետք է պահպանվեն գաղտնի և մշտապես ապահով:
 - COVID-19-ին առնչվող ծառայությունների վերաբերյալ բողոքների և առաջարկների կառավարում:
 - Իրականացվող ամբողջ աշխատանքի շրջանակում արձանագրությունների և գործելակերպի գնահատում՝ ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը, վարակի վերահսկումը և ախտահանումը:
 - COVID-19-ին համահունչ ախտանիշներ ունեցող և/կամ COVID-19-ի թեստի դրական արդյունք ունեցող աշխատակցի համար համապատասխան գործընթացների կազմակերպում:
- ❑ Աշխատավայրը պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ անձնական պաշտպանության միջոցները (PPE) և աշխատանքի համար պահանջվող վարակի վերահսկման պարագաները՝ ներառյալ **դիմակները**, ձեռքերի ախտահանիչ միջոցները, ախտահանիչները և (անհրաժեշտության դեպքում) ձեռնոցները, ձեռքերի լվացման շարժական կայանները և այլ սարքավորումներ ու պարագաներ:
- ❑ Բոլոր աշխատակիցներից և այցելուներից պահանջվում է կրել **համապատասխան դիմակ** ամեն անգամ, երբ շփվում են այլ անձանց հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրության գործունեությունն արգելում է կրել **դիմակներ**: Այսպիսի դեպքերը պետք է լինեն կարճատև և հնարավորինս պետք է պահպանվի ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր, քրոնիկ առողջական վիճակներ ունեցող անձինք) պետք է վստահել այնպիսի աշխատանք, որը հնարավոր ցանկացած ժամանակ կարող է կատարվել տնից:
- ❑ Բոլոր այն աշխատակիցներին, որոնք ունեն COVID-19-ին համահունչ ախտանիշներ, COVID-19-ի թեստի դրական արդյունք, կամ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ, պետք է հրահանգել մնալ տանը և հետևել Հանրային Առողջապահության Վարչության (DPH) **հնրամակուսացման կարանտին** պահպանելու ուղեցույցներին՝ ըստ կիրառելիության:
- ❑ **Աշխատակիցների ստուգումները պետք է իրականացվեն նախքան աշխատակիցների,**

ծառայություն մատուցողների, պայմանագրային աշխատողների, առաքման անձնակազմի և աջակցող մյուս անձնակազմի անդամների կողմից աշխատավայր մուտք գործելը՝ համաձայն LACDPH-ի [Մուտքի Ստուգումների Ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրամաններին: Նշված ստուգումները կարող են կատարվել հեռակա կարգով կամ աշխատավայրում անձնապես՝ աշխատակիցների ժամանման պահին: Հնարավորության դեպքում պետք է կատարվի ջերմաչափում:

- Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 14 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է մուտք գործել և աշխատել այդ օրը:

- Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում).

- Եթե անձն ամբողջովին պատվաստված չէ՝ COVID-19-ի դեմ և վերջին 14 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:

- Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը մեկուսանալու: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:

□ Աշխատակիցներին պետք է տրամադրվի տեղեկատվություն աշխատակիցներին հասանելիք կամ կառավարության կողմից ֆինանսավորվող արձակուրդային նպաստների մասին, որն աշխատակիցն իրավասու կլինի ստանալ, ինչն էլ ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Հիվանդության հիմքով տրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատակիցներին տրվող փոխհատուցման մասին լրացուցիչ տեղեկությունները տե՛ս կառավարության [ծրագրերում](#)՝ ներառյալ [Ընտանիքների կողմից Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի](#) շրջանակում աշխատակցի հիվանդության հիմքով արձակուրդային նպաստի իրավունքների և աշխատակիցների՝ աշխատողներին փոխհատուցման նպաստների տրամադրման իրավունքի, ինչպես նաև Մարտի 19-ից 2020 թ. Հուլիսի 5-ն ընկած ժամանակահատվածում COVID-19-ին առնչվող աշխատանքի շրջանակներում ենթադրվող վարակման մասին տեղեկությունները՝ համաձայն Նահանգապետի N-62-20 Գործադիր [Հրամանի](#):

□ Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևավորվում են այնպես, որ բարձրացնեն աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունները:

□ Թեստավորում: Նախքան աշխատանքի ընդունվելը երաժշտության, հեռուստատեսության և կինոյի բոլոր արտադրությունների՝ ներառյալ կարճաժամկետ կամ մեկանգամյա արտադրությունների համար, պարտադիր է SARS-CoV-2 վիրուսի թեստավորումը պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) միջոցով՝ 48-72 ժամ առաջ հավաքագրված նմուշով՝ նախքան աշխատանքի անցնելը: Շարունակվող արտադրության գործունեության ժամանակաշրջանում պահանջվում է ամբողջ անձնակազմի, դերասանների, կատարողների և աշխատակազմի թեստավորում (PCR) առնվազն շաբաթը մեկ անգամ: Խորհուրդ է տրվում, որպեսզի բարձր վտանգ ներկայացնող գործունեության մեջ ընդգրկված անձնակազմի անդամները և կատարողները, ինչպիսիք են սերտ շփում նախատեսող տեսարաններն՝ առանց [դիմակ](#) կրելու՝ հատկապես այնպիսի աշխատանքներում,



որոնք ներառում են բղավել կամ երգել, պետք է PCR-ի միջոցով թեստավորվեն ավելի հաճախ, քան շաբաթը մեկ անգամ:

Թեստավորման ցանկացած և բոլոր ծրագրերը գործատուի պարտականությունն են և պետք է օգտվեն բժշկական մասնագետի կողմից:

❑ Տեղեկանալով այն մասին, որ աշխատակիցներից մեկի կամ մի քանիսի թեստերի արդյունքները դրական են եղել, կամ ունի/ունեն COVID-19-ին համահունչ ախտանիշներ (case), գործատուն պետք է ունենա արձագանքի ծրագիր՝ համաձայն Լոս Անջելեսի Շրջանի կողմից պահանջվող ուղեցույցին, որը պետք է ներառի հետևյալ քայլերը.

○ Հիվանդ աշխատակցին պետք է անմիջապես տուն ուղարկել: Եթե նա ունի լուրջ հիվանդության ախտանիշներ, շնչառական դժվարություն, ցավ կամ ճնշում կրծքավանդակում, կապտած շրթունքներ կամ շփոթված տեսք, ապա զանգահարեք 911: Նա պետք է իր ախտանիշների մասին խոսի իր բժշկի հետ և որոշի COVID-19-ի թեստ հանձնելու անհրաժեշտությունը:

- Աշխատակցին չի թույլատրվում վերադառնալ, քանի դեռ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման 24 ժամ ջերմություն չի ունեցել, և ախտանիշները բարելավվել են՝ ախտանիշների ի հայտ գալու օրվանից սկսած առնվազն տաս (10) օր բացակայությամբ:
- Եթե աշխատակցի SARS-CoV-2 վիրուսի թեստի արդյունքը դրական է, սակայն նա որևէ ախտանիշ չունի, ապա նրան 10 օրով արգելվում է վերադառնալ՝ սկսած թեստի նմուշի հավաքագրման օրվանից:
- Դիտարկեք աշխատանքի այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ հեռատիպի միջոցով, կամ հեռավար տարբերակով կատարվող աշխատանք, եթե աշխատակիցը

¹ Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, եթե անցել է 2 (երկու) շաբաթ ժամանակ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո (օր.՝ Pfizer-BioNTech կամ Moderna) կամ անցել է 2 շաբաթ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց հետո (օր.՝ Johnson and Johnson [J&J/Janssen]):

կարողանա կատարել դա:

- Իրականացրեք հիվանդ կամ վարակված աշխատակցի կողմից դիպած բոլոր տարածքների մաքրում և ախտահանում:
- Հայտնաբերեք հիվանդ աշխատակցի հետ սերտ շփում ունեցած անձնակազմի և աշխատակազմի անդամներին և մյուս անձանց: Տես կարանտինի ուղղեցույցը (<http://ph.lacounty.gov/covidquarantine>), սերտ շփումների սահմանման համար և այն մասին, թե ինչ պետք է նրանք անեն: Հիվանդ աշխատակցի անունը չպետք է բացահայտվի, և բժշկական գաղտնիությունը պետք է պահպանվի:

❑ Գործատուի ծրագիրը կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար պետք է նախատեսի արձանագրություն, որպեսզի նրանք հասանելիություն ունենան կամ COVID-19-ի թեստ հանձնեն, որպեսզի որոշվի՝ արդյոք աշխատավայրում եղել են վարակման լրացուցիչ դեպքեր, ինչը կարող է պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումների իրականացում: Հաշվի առեք, որ PCR-ի բացասական թեստը (քթից / կոկորդից / թքից վերցված նմուշով կատարվող գենետիկական նյութի (genetic material) թեստ) ցույց է տալիս միայն, որ թեստավորման պահին նմուշում առկա վիրուս չի եղել: Անձինք, որոնց թեստի պատասխանը բացասական է եղել, պետք է այնուամենայնիվ 10 օր ամբողջական կարանտին պահպանեն և պետք է շարունակեն վերահսկել իրենց առողջական վիճակը ամբողջ 14 օրերի ընթացքում: Անձինք, ովքեր ավարտում են 10-օրյա կարանտինը, պետք է շարունակեն կրել դիմակ և մյուսներից պահպանել ֆիզիկական հեռավորություն ամբողջ 14 օրերի ընթացքում: Անձնակազմի անդամները



և/կամ երաժիշտները, որոնք սահմանված շարունակական թեստավորման վերահսկողության ծրագրի մաս են կազմում, և որոնց թեստի պատասխանը բացասական է՝ իրենց 10-օրյա կարանտինից առաջ 48 ժամվա ընթացքում, կարող են ներակայացումների ժամանակ հանել իրենց դիմակները, սակայն պետք է կրեն դիմակները այլ ժամանակ: Ներկայացումների ժամանակ նրանք պետք է հնարավորինս պահպանեն ֆիզիկական հեռավորություն: Մազահարդարման, դիմահարդարման, հագուստի և աուդիո անձնակազմի անդամները, ովքեր պետք է սերտորեն աշխատեն մյուսների հետ, ովքեր վարակման կարանտինի 11-14-րդ օրերի մեջ են գտնվում և որոնց PCR թեստի պատասխանը բացասական է՝ 10-րդ Օրվանից առաջ 48 ժամվա ընթացքում, կարող են սերտորեն աշխատել անձնակազմի հետ, միայն եթե դա չափազանց անհրաժեշտ է այդ պահին, և պետք է կրեն դիմակներ և դեմքի վահաններ նկարահանման ամբողջ ընթացքում:

Եթե պրոդյուսերը, ռեժիսորը, հաղորդավարը, սեփականատերը, մենեջերը, կամ օպերատորը գիտի վերջին 14 օրերի ընթացքում աշխատավայրում COVID-19-ով վարակման երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, ապա գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին տեղեկացնի Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 կամ առցանց հետևյալ հասցեով՝ www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում հաստատվի վարակման խմբակային դեպք, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը կձեռնարկի արձագանք խմբակային դեպքին, որը ներառելու է վարակի վերահսկման ուղեցույցի տրամադրում և խորհուրդներ, տեխնիկական աջակցություն և հաստատությանը հատուկ վերահսկման միջոցառումներ: Հանրային Առողջապահության դեպքերի կառավարչին կհանձնարարվի իրականացնել խմբակային դեպքի քննություն՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:

Աշխատակիցներին (ներառյալ՝ անձնակազմը, դերասանական կազմը, աշխատակազմը, ծառայություն մատուցողները և հաճախորդները), որոնք շփում ունեն այլ անձանց հետ, պետք է անվճար տրամադրվի համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է կրի դիմակը՝ ծածկելով քիթը և բերանը, աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում, երբ նա շփվում է, կամ, հավանական է, որ կշփվի այլ անձանց հետ: Այն աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածում ամրացված կտորով՝ համաձայն Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակի ստորին հատվածը ծածկող կտորով դեմքի վահանները: Չի թույլատրվում օգտագործել միակողմանի փականներ ունեցող դիմակներ:

Աշխատակիցներին պետք է կարգադրել լվանալ կամ փոխել իրենց դիմակներն ամեն օր:

Բոլոր աշխատանքային կայանները պետք է իրարից առնվազն վեց ոտնաչափով առանձնացված լինեն:

Հանգստի սենյակները, զուգարանները և ընդհանուր օգտագործման այլ վայրերը պետք է ախտահանվեն յուրաքանչյուր ժամը մեկ հետևյալ գրաֆիկով.

- Տեղաբաշխման տարածք _____
- Դիմահարդարման/ Մազերի և Հագուստի տարածքներ _____
- Դերասանական կազմի Կանաչ Սենյակներ կամ Կցասայլեր _____
- Ընդմիջման սենյակներ _____
- Զուգարաններ _____
- Այլ _____

Ընդմիջումները բաշխվում են այնպես, որ ընդմիջման կամ մյուս սենյակներում՝ ինչպես օրինակ

դերասանական կազմի անդամների սպասարահները, աշխատակիցների միջև ամբողջ ժամանակ հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:

- Աշխատակիցներին չի թույլատրվում ուտել կամ խմել հատուկ նախատեսված տարածքներից բացի այլ տարածքներում՝ ապահովելու դիմակների հետևողականորեն և ճշգրիտ կրումը: Դերասանական կազմը և անձնակազմը պետք է ուտեն և խմեն հատուկ նախատեսված տարածքներում՝ հերթափոխային գրաֆիկով:
- Ախտահանիչները և առնչվող պարագաները պետք է հասանելի լինեն աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում՝

- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցը պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցների համար հետևյալ տեղանք(ներ)ում.

- Աշխատակիցներին պետք է թույլատրել հաճախակի ընդմիջումներ՝ լվանալու ձեռքերը:
- Սույն արձանագրության պատճենը պետք է տրամադրվի յուրաքանչյուր աշխատակցի:
- Յուրաքանչյուր աշխատակցի, որքանով հնարավոր է, պետք է տրամադրվեն իր սեփական գործիքները, սարքավորումները և սահմանված տարածքը: Ձեռքով բռնվող պարագաների համատեղ օգտագործումը պետք է հասցվի նվազագույնի կամ վերացվի ընդհանրապես:
- Ընդհանուր օգտագործման բոլոր սարքավորումները, միկրոֆոնները և գործիքները պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Ընդհանուր օգտագործման բոլոր հագուստները պետք է մաքրվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Բոլոր կեղծամները կամ համատեղ օգտագործման այլ պրոթեզային պարագաները պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Սույն ցանկում նշված բոլոր քաղաքականությունները՝ բացառությամբ աշխատանքի ընդունման պայմանների, պետք է կիրառվեն առաքում իրականացնող անձնակազմի կամ տարածքում որպես երրորդ կողմ հանդես եկող ցանկացած այլ ընկերության նկատմամբ:
- Բոլոր աշխատակիցներին պետք է տրամադրվեն COVID-19-ի վերաբերյալ դասընթացներ և դրանք պետք է գրանցվեն՝ ներառյալ տեղեկատվությունը վիրուսի և բոլոր անհրաժեշտ անվտանգության միջոցառումների մասին:

Կենդանի Հանդիսատես .

- o **Բացօթյա Տարածք:** Եթե կենդանի հանդիսատեսը պետք է օգտագործվի բացօթյա միջոցառումների կամ ներակայացումների համար, ապա պետք է հետևել ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության [Բացօթյա Կենդանի Միջոցառումների և Ներկայացումների Նստելակարգի Արձանագրությանը](#):
- o **Փակ Տարածք:** Մեծաթիվ կենդանի հանդիսատեսի առկայությունը փակ տարածքում (ավելի քան 50 անձ) արգելվում է այս ընթացքում: Արտադրությունների համար, որոնք պահանջում են կենդանի հանդիսատես, այն պետք է բաղկացած լինի այնպիսի մարդկանցից, որոնք վարձակալված են արտադրության կողմից կամ նրա անունից, կամ հանդիսանում են 3-րդ կողմի վարձակալ այդ նպատակով (օր.՝ դերասաններ, հավելյալ անձինք), կամ արտադրության մյուս աշխատակիցներ, և չպետք է լինեն լայն հանրության անդամներ: Վարձակալված հանդիսատեսի բոլոր անդամները պետք է հետևեն մյուս աշխատակիցների



համար նախատեսված պահանջներին: Վարձակալված մարդկանց միևնույն խումբը պետք է հնարավորինս օգտագործվի որպես վարձու հանդիսատես ամբողջ արտադրության ընթացքում:

Եթե պետք է օգտագործվի վարձակալված հանդիսատես, ապա անդամները պետք է այնպես նստեն, որ յուրաքանչյուր հանդիսատեսի անդամ մյուս անդամից պահպանի առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, և նրանք պետք է մշտապես դիմակ կրեն: Միևնույն բնակավայրի (օր.՝ ընտանիքի) անդամ հանդիսացող հանդիսատեսի անդամները կարող են նստել միասին: Խստորեն խորհուրդ է տրվում, որպեսզի վարձակալված հանդիսատեսը նստի բացօթյա, այլ ոչ թե փակ տարածքներում:

- Արտադրության բոլոր սեսիաների ամսաթվերը, ժամանակը և մասնակիցները պետք է գրանցվեն՝ հետագա հղման համար, եթե որևէ անձ կունենա COVID-19-ով վարակման նշաններ և/կամ նրա թեստը դրական կլինի:
- Ընտրովի—Նկարագրեք այլ միջոցառումներ .

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Բոլոր նոր կամ վերսկսվող արտադրությունները և խմբակային ձայնագրման սեսիաները մինչև աշխատանքը սկսելը պետք է ունենան գրավոր արձանագրություն՝ ամբողջ արտադրությունում ներգրավված մարդկանց միջև վեց (6) ոտնաչափ կամ ավել ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար: Արձանագրությունը պետք է ապահովի հետևյալը.
 - Ցանկացած ժամանակ նկարահանման հրապարակում կամ հարակից տարածքում կարող են գտնվել միայն հիմնական դերասանները և անձնակազմը:
 - Արտադրության կամ խմբավորման հարցերով հանդիպումները պետք է սահմանափակվեն հիմնական անձնակազմի մասնակցությամբ և պետք է անցկացվեն այնպիսի վայրերում, որտեղ հնարավոր է պահպանել ֆիզիկական հեռավորություն:
 - Ռազմավարությունները կարող են ներառել արտադրության մասնակիցների բաշխումը հնարավորինս ամենափոքր խմբերի, որոնք կարող են մուտք ունենալ նկարահանման հրապարակ կամ հարակից տարածք տարբեր ժամանակներում՝ իրար հանդիպելու կամ իրար խառնվելու նվազագույն հավանականությամբ:
 - Դերասանական կազմի բոլոր անդամները և երաժիշտները, որոնք իրենց աշխատանքը կատարելիս չեն կարող կրել դիմակ (օր.՝ դերասանները, փողային գործիքներ նվագողները, երգիչները) փորձերի և ներկայացումների ժամանակ պետք է ձգտեն պահպանել առնվազն 12 ոտնաչափ սոցիալական հեռավորություն կամ միայնակ երգեն ձայնային խցիկում: Արգելապատնեշները՝ ինչպիսիք են թափանցիկ պլաստմասսան (plexiglass), կարող են կիրառվել լրացուցիչ ապահովության համար
- Հնարավորության դեպքում, բոլոր աշխատանքային տարածքները պետք է ունենան միակողմանի շարժի ուղղություն (տարբեր մուտքեր և ելքեր)՝ դռների անցումներում շփումը կամ մարդկանց կուտակումները կանխելու համար:
- Վերելակի տեղավորելիության հնարավորությունը պետք է սահմանափակվի այնքան մարդկանցով, որքան կարող է գտնվել վերելակում՝ իրարից պահպանելով վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն; շենք մուտք գործելու և շենքից դուրս գալու ծանրաբեռնված ժամերին այդ թիվը կարող է դառնալ չորս (4) կամ ավելի քիչ անձ ցանկացած վերելակի դեպքում, որի ներսում



հնարավոր չէ իրարից պահպանել վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Վերելակում գտնվող բոլոր անձինք պետք է կրեն **դիմակներ**: Հաշվի առեք վերելակի չափերը, շենքի հարկերի քանակը, և այցելուների և աշխատակիցների ամենօրյա թիվը, որպեսզի վերելակից օգտվողների համար կազմեք ֆիզիկական հեռավորության պահպանման համապատասխան ուղեցույցներ:

- Վերելակի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար շենքի աստիճանները պետք է բաց լինեն դեպի <<վերև>> և <<ներքև>> երթևեկության համար՝ աստիճանավանդակների առավելագույնս մաքրությամբ:
- Նախասրահներում և աշխատակիցների ընդմիջման սենյակներում, կանաչ սենյակներում և կցասայլերում, ինչպես նաև ընդհանուր վայրերում տեղակայված կահույքը պետք է առանձնացված լինի առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորությամբ:
- Բոլոր խանութները (գույքի, հագուստի, դիզայնի, էլեկտրական սարքավորումների և այլն) և արտադրամասերը աշխատում են հաճախորդների հետ միայն նախնական պայմանավորվածության սկզբունքով՝ հերթերից և մարդկանց կուտակումներից խուսափելու համար: Առևտուրը պետք է հնարավորինս վիճարկվի տիրույթում իրականացվի, կամ խանութից պետք է առևտուր կատարի միաժամանակ մեկ հաճախորդ: Առաջարկների մասին տպագրված ցանկացած կատալոգ պետք է լինի մեկանգամյա օգտագործման և տրամադրվի միայն մեկ հաճախորդի և չպետք է վերաօգտագործվի: Եթե հաճախորդը պետք է սպասի ապրանքին, ապա հնարավորության դեպքում պետք է սպասի դրսում:
- Ամբողջ անձնակազմը, դերասանական կազմը, աշխատակազմը, երաժիշտները, ծառայություն մատուցողները, հաճախորդները և այլ այցելուները պետք է ամբողջ ընթացքում իրարից պահպանեն առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ առաջադրանքները պահանջում են ֆիզիկապես իրար ավելի մոտ գտնվող աշխատանք:
- Հատուկ արտադրության աշխատանքի մաս չկազմող փորձերն արգելվում են:
- Աշխատանքային սենյակներում, կինոյի և ձայնի խմբագրման տարածքներում գտնվող աշխատակիցների աշխատանքային վայրերը պետք է առանձնացված լինեն իրարից առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորությամբ, իսկ ընդհանուր տարածքները պետք է այնպես դասավորված լինեն, որ սահմանափակեն աշխատակիցների հավաքները՝ ապահովելով առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը: Պետք է սահմանվի և հրապարակվի աշխատանքային սենյակների, հանդիպումների սենյակների և հարկերի առավելագույն տեղավորելիության չափը:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Բոլոր շենքերում տեղակայված HVAC համակարգերը պետք է լինեն լավ գործնական վիճակում; հնարավորության սահմաններում բոլոր տարածքներում պետք է ուժեղացվի օդափոխության համակարգը ներառյալ աշխատանքային սենյակներում, ձայնագրման տարածքներում, հանդիպման սենյակներում, բեմահարթակներում, կանաչ սենյակներում և կցասայլերում, ինչպես նաև տեղում գործող խանութներում: **Արդյունավետ օդափոխությունը փոքրիկ աերոզոլների փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից է:** HVAC համակարգի վիճակը գնահատվում է տեղում ստուգման միջոցով: Մտածեք շարժական, բարձր արդյունավետություն ունեցող օդը մաքրող համակարգերի ներդրման, շենքի օդային խողովակների՝ հնարավոր առավելագույն արդյունավետություն ունեցող խողովակներով փոխարինման, ինչպես նաև աշխատանքային տարածքներում դրսի օդի քանակի և օդափոխության ավելացմանն ուղղված փոփոխություններ իրականացնելու մասին: **Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Գալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության Փակ Տարածքներում Օդափոխության, Զտման և Օդի Որակի Ժամանակավոր Ուղեցույցը:**

- Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխությունը և փակ տարածքներում օդի որակի բարելավման մյուս տարբերակները հանդիսանում են հավելյալ, այլ ոչ փոխարինող միջոց պարտադիր նախագուշական միջոցառումներին՝ ներառյալ դիմակ կրելը (բացառությամբ բարձր վտանգավորություն ունեցող որոշ միջավայրերում, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), մարդկանց միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանելը, հաճախ ձեռքերը լվանալը և սահմանափակելը այնպիսի գործողությունների, որոնք միավորում են տարբեր ընտանիքների անդամ հանդիսացող անձանց:

- ❑ Բոլոր պայմանագրերը, սցենարները, երաժշտական թղթերը և ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք սովորաբար օգտագործվում են համատեղ կարգով, պետք է կամ տրամադրվեն էլեկտրոնային տարբերակով, կամ տպագրվեն և անհատապես տրամադրվեն դերասանական կազմի, աշխատակազմի, անձնակազմի անդամներին և երաժիշտներին՝ խուսափելու համատեղ օգտագործումից:
- ❑ Վիճակարահանման և ձայնագրման սեսիաներից, խմբակային խմբագրումներից, կամ այլ հանդիպումներից առաջ և հետո հաճախակի հպման մակերեսները (օր.՝ սեղաններ, դռների բռնակներ, տպագրող սարքեր, գույք, ընդհանուր օգտագործման սարքավորումներ) պետք է ախտահանվեն՝ օգտագործելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցները: Նմանատիպ մակերեսները պետք է մաքրվեն օրական առնվազն երեք անգամ:
- ❑ Նկարահանման հրապարակները, արտադրության տարածքները և ամբողջ հաստատությունը պետք է մաքրվեն առնվազն ամեն օր, իսկ զուգարանները և հաճախակի հպման մակերեսները/ առարկաները պետք է մաքրվեն **յուրաքանչյուր ժամը մեկ**:
- ❑ Բոլոր այցելուներին պետք է կարգադրել հաստատությունում գտնվելու ամբողջ ընթացքում կրել **դիմակ**՝ ծածկելով քիթը և բերանը՝ բացառությամբ, եթե նրանք փակ սենյակում մենակ են: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և երկու տարեկան և բարձր երեխաներին: **Այն անձինք, որոնց իրենց բժիշկը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին հատվածում կտոր ամրացված դեմքի վահան՝ համապատասխանելու Նահանգի պահանջներին, եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: Միակողմանի փականներով դիմակները չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այցելուների անվտանգության ապահովման նպատակով **դիմակները** պետք է հասանելի լինեն այն այցելուների համար, որոնք կժամանեն առանց **դիմակի**:**
- ❑ Դերասանական կազմի անդամ փոքր երեխաներին կարող են ուղեկցել մինչև երկու (2) մեծահասակ անձինք՝ ինչպես օրինակ ծնողը, խնամակալը և/կամ ուսուցիչը: Երեխաները պետք է գտնվեն իրենց ծնողի կամ խնամակալի կողքին և խուսափեն այլ անձանց կամ իրենց չպատկանող ցանկացած իրին դիպչելուց և, եթե տարիքը թույլ է տալիս, պետք է կրեն դիմակ նկարահանման հրապարակից դուրս գտնվելիս:
- ❑ **Մուտքի ստուգումները** պետք է **իրականացվեն** նախքան այցելուների կողմից տարածք մուտք գործելը: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրամաններին: Նշված ստուգումները կարող են կատարվել անձնապես (աշխատակիցների ժամանման պահին) կամ այլընտրանքային տարբերակներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման համակարգերի կամ հաստատության մուտքի մոտ փակցված **ցուցանակի** միջոցով, որը կնշի, թե որ ախտանիշների դեպքում աշխատակիցները չպետք է մուտք գործեն տարածք: Աշխատավայրում հնարավորության դեպքում պետք է կատարվի ջերմաչափում:
 - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է). Եթե անձը չունի **ախտանիշ(ներ) և վերջին 14 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված**

անձի հետ, նա կարող է տվյալ օրը մուտք գործել:

○ Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում).

- Եթե վերջին 14 օրերի ընթացքում անձը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:
- Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը մեկուսանալու: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:

- ❑ Ձեռքերի ախտահանիչ միջոցները, անձեռոցիկները և աղբարկղերը պետք է հասանելի լինեն ամբողջ դերասանական կազմի, աշխատակազմի, երաժիշտների և անձնակազմի համար հաստատության մուտքի մոտ կամ հարակից տարածքում, աշխատասենյակներում և ձայնագրման սենյակներում, նկարահանման հրապարակի հարակից տարածքում կամ տեղանքում: Նախընտրելի են առանց հպման աղբարկղերը:
- ❑ Վճարման բոլոր համակարգերը, գրիչները և սենսորային մակերեսների համար նախատեսված գրիչները պետք է ախտահանվեն յուրաքանչյուր անգամ տարբեր մարդկանց կողմից օգտագործվելուց հետո:
- ❑ Նախընտրելի են այն գույքը, հագուստը և նկարահանման պարագաները, որոնք հնարավոր է հեշտությամբ ախտահանել:
- ❑ Դերասանական կազմի և աշխատակազմի բոլոր անդամները պետք է կրեն դիմակ և լվանան կամ ախտահանեն իրենց ձեռքերը գույքին, հագուստին կամ նկարահանման պարագաներին ձեռք տալուց առաջ: Նկարահանման ընթացքում դերասանական կազմի անդամները կարող են օգտագործել այդ պարագաներն առանց դիմակ կրելու:
- ❑ Ամբողջ գույքը, հագուստը և նկարահանման պարագաները պետք է ախտահանվեն առաջին նկարահանումից առաջ և տարբեր դերասանների կողմից օգտագործվելու միջակայքում:
- ❑ Հնարավորության դեպքում դերասանական կազմի անդամները պետք է բերեն իրենց անձնական պարագաները/գույքը (օր.՝ բջջային հեռախոս) և հագուստը, որպեսզի դրանք համատեղ չօգտագործվեն:
- ❑ Բոլոր բեռնատարները և այլ փոխադրամիջոցները պետք է ախտահանվեն յուրաքանչյուր անգամ դրանցից օգտվելուց հետո:

D. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ, ԴԵՐԱՄԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱՌՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Մույն արձանագրության պատճենը պետք է տրամադրվի ցանկացած աշխատանք իրականացնող բոլոր այն անձանց, որոնք մուտք են գործում հաստատություն կամ նկարահանման տարածք:
- ❑ Մույն արձանագրության պատճենը, կամ, եթե կիրառելի է, հաստատության կողմից տպագրված Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության Վկայականը պետք է փակցվի հաստատության բոլոր մուտքերի մոտ: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի

Անվտանգության Համապատասխանության ինքնուրույն վավերացման ծրագիրը լրացնելու համար այցելեք՝ <http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm>: Հաստատությունները պետք է տեղում պահեն Արձանագրությունների պատճենները՝ ըստ պահանջի վերանայման համար:

- Ամբողջ հաստատության կամ նկարահանման հրապարակի տարածքում պետք է փակցվի ցուցատախտակ, որը պետք է փոխանցի հետևյալ տեղեկությունները.
 - COVID-19-ով վարակված լինելու ախտանիշներ ունեցող կամ վիրուսի դրական թեստ ունեցող անձանց մուտքն արգելվում է:
 - Հնարավոր կամ հաստատված COVID-19-ով վարակված անձի հետ շփում ունեցած և կարանտինի մեջ գտնվող անձանց մուտքն արգելվում է:
 - **Դիմակներ** կրելու պահանջներ:
 - Որոշ հանդիպման սենյակներում, հանգստի սենյակներում, ճաշելու համար նախատեսված տարածքներում, ձայնագրման սենյակներում, նկարահանման հրապարակներում և փոխադրամիջոցներում տեղավորելիության սահմանափակում (պետք է փակցված լինի վերոհիշյալ տարածքների մուտքի մոտ կամ անմիջապես դրսի կողմից):
 - Ախտանշանների, ջերմության ստուգմանն ուղղված գործողություններ (պետք է փակցված լինի մուտքային տարածքներում):
 - Կոնտակտային տեղեկություններ տեղում COVID-19-ի Համապատասխանությունն Ապահովող Պատասխանատուի (C19CO) մասին:

E. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապահովելու հասանելիություն դերասանական կազմի, աշխատակազմի և երաժիշտների շրջանում շարժունակության սահմանափակումներ ունեցող անդամների և/կամ հանրային վայրերում բարձր վտանգի տակ գտնվող անձանց համար:

F. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն արձանագրության բոլոր մյուս համապատասխան բաժիններին համապատասխանելուն զուգահեռ, երաժշտության արտադրությունը պետք է հետևի նաև ստորև ներկայացված ցանկին.

- Բոլոր սեսիաները պետք է նախօրոք ամրագրվեն՝ ամրագրման ժամանակ գրանցելով սպասվող մասնակիցների թիվը՝ վստահ լինելու, որ հնարավոր է պահպանել ֆիզիկական հեռավորություն: Հարկավոր է պահել այցելուների գրանցման մատյան, որտեղ կպահպանվեն բոլոր այցելուների անունները և նրանց կոնտակտների տեղեկությունները:
- Ստուդիա ցանկացած ժամանակ մուտք ունեցող անձանց շրջանակը (ներառյալ դերասանների անձնակազմը և օգնականների անձնակազմը) պետք է սահմանափակվի միայն հիմնական/կարևոր անձնակազմով: Սա ներառում է դերասանների, երգերի հեղինակների, լուսանկարիչների / տեսանկարահանողների և այն անձանց շրջանակը, որոնք կարող են ուղեկցել նրանց, պետք է խստորեն սահմանափակվի՝ միայն հիմնական անձնակազմի անդամներով:
- Նոտաները և այլ թղթե նյութերը պետք է փոխանցվեն՝ կրելով ձեռնոցներ: Լավագույն դեպքում դրանք պետք է լինեն մեկանգամյա օգտագործման և չպետք է հավաքագրվեն սեսիայի ավարտին:
- Հնարավորության սահմաններում, ստուդիայից օգտվող ցանկացած անձ պետք է օգտագործի իր



սեփական սարքավորումը (ներառյալ՝ տեսախցիկները, ականջակալները, խոսափողերը, վահանակները), սեղանները, հեռախոսները, պարագաները, և այլն: Եթե սարքավորումը պետք է համատեղ օգտագործվի, այն պետք է ախտահանվի օգտագործումների միջակայքում:

- Պետք է կատարվեն հեռավորության մասին նշումներ՝ ցույց տալու պատշաճ սոցիալական հեռավորությունը: Խոսափողները, վահանակները և մյուս սարքավորումները պետք է կարգավորված լինեն՝ հեշտացնելով սոցիալական հեռավորության պահպանումը:
- Ստուդիա մտնող անձինք պետք է կրեն **դիմակներ**, որոնք ծածկում են քիթը և բերանը ցանկացած ժամանակ, երբ գտնվում են այլ անձանց մոտակայքում՝ հատկապես ընդհանուր օգտագործման տարածքներում՝ ներառյալ նախասրահներում, խոհանոցներում, լոգարաններում:
- Բոլոր երաժիշտները և երգիչները, որոնք կատարում են այնպիսի աշխատանք, որի ընթացքում չեն կարող կրել **դիմակ** (օր.՝ փողային գործիքներ նվագողները կամ երգիչները) փորձերի և ներկայացումների ժամանակ պետք է ձգտեն պահպանել նվագագույնը **12** ոտնաչափ սոցիալական հեռավորություն, **կամ միայնակ երգեն ձայնային խցիկում**: Արգելապատնեշները, ինչպիսիք են **թափանցիկ պլաստմասսան (plexiglass)**, կարող են կիրառվել լրացուցիչ ապահովության համար:
- Դերասանը պետք է անհրաժեշտության դեպքում ժամանի մազերը և դեմքը հարդարված վիճակում:
- Ցանկալի է, որ պայմանագրային աշխատողները հարկային ձևաթուղթը կամ այլ հավաքական պայմանավորվածությունների թղթերը (Cartage) ստանան էլեկտրոնային կամ փոստային տարբերակով:
- Ստուդիայի գործողության ծրագրերին վերաբերող հաստատման ձևերի պատճենները և գրավոր ծանուցումները պետք է տեղադրվեն մուտքերի մոտ:
 - Հնարավորության դեպքում ձևաթղթերը պետք է նախապես էլեկտրոնային տարբերակով ուղարկվեն պայմանագրային աշխատողներին և այցելուներին էլեկտրոնային ստորագրության համար, որպեսզի ստուդիայում նվազեցվի ֆիզիկական շփումը:
- Հնարավորության դեպքում բոլոր ֆինանսական գործարքները պետք է կազմակերպվեն նախապես, կամ սեսիայից հետո՝ շփում չնախատեսող համակարգերի միջոցով: Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են կատարվել հեռակա տարբերակով, պետք է տեղափոխվեն առցանց:

G. ԼՍՈՒՄՆԵՐԻ ՍԵՍԻԱՆԵՐ

- Հնարավորության դեպքում լուսնները պետք է անցկացվեն հեռակա կարգով և այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսին է՝ տեսակոնֆերանսը (videoconferencing):
- Այն դեպքում, եթե լուսններն անցկացվում են անձնապես, պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.
 - Պետք է լինեն նախնական պայմանավորվածություններ՝ մարդկանց խիտ կուտակումներից խուսափելու համար: Բաց լուսններն արգելվում են:
 - Սեսիային մասնակցող բոլոր անձինք պետք է կրեն **դիմակներ**, լուսններն անցնող անձը կարող է անհրաժեշտության դեպքում լուսնների համար հանել իր **դիմակը**:
 - Բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն մեկանգամյա օգտագործման տպագիր սցենարներ, արգելվում է սցենարները փոխանցել իրար:
 - Լուսններին մասնակցող անձը պետք է դրսում սպասի իր հերթին և հեռու կանգնի մյուս

մասնակիցներին:

- Մի քանի անձանցով անցկացվող լսումների ժամանակ անձանց միջև պետք է պահպանվի առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն:

H. ՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

- Անձնակազմի բոլոր անդամները պետք է լվանան կամ ախտահանեն իրենց ձեռքերը տեսարանի նկարահանումը սկսելուց առաջ և չդիպչեն իրենց դեմքին նկարահանման սեսիայի ընթացքում: Աշխատակազմի ցանկացած անդամ, ով պետք է հաղորդակցվի նկարահանման հրապարակի անձանց կամ անձնակազմի հետ, նույնպես պետք է լվանա կամ ախտահանի իր ձեռքերը նկարահանումը սկսելուց առաջ և պետք է կրի **դիմակ**:
- Ցանկացած աշխատանք՝ ներառյալ տեսարանները, որոնք դերասաններից և աշխատակազմից պահանջում են վեց (6) ոտնաչափից ավելի մոտ շփում, պետք է հնարավորինս կարճ լինեն, իսկ դերասանները պետք է հնարավորինս լուռ լինեն, որպեսզի խոսելու միջոցով չտարածեն թքի կաթիլները: Այս պահին չեն խրախուսվում այնպիսի տեսարանները, որոնք նախատեսում են երկարատև ֆիզիկական շփում (մտերմիկ (ինտիմ) տեսարաններ, կոփի տեսարաններ):
- Խորհուրդ չեն տրվում** մարդկային հոծ բազմությամբ տեսարանները:
- Նկարահանումները պետք է կատարվեն առավոտյան ժամը 7-ից 22-ն ընկած ժամանակահատվածում՝ հնարավորինս պահպանելով գործունեություն իրականացնելու համար նախատեսված համապատասխան ժամերը:

I. ՄԹԵՐՔՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՌԱՔՈՒՄ

- Բոլոր դերասանները և ամբողջ անձնակազմը սնունդին ձեռք տալուց առաջ պետք է լվանան կամ ախտահանեն իրենց ձեռքերը:
- Բուժետներն արգելվում են:
- Արգելվում են սննդի կամ խմիչքի կոմունալ ծառայությունները (արգելվում են սրճեփ սարքերը, արգելվում են սուրճի պատրաստման մեկանգամյա ծառայությունները):
- Ամբողջ սնունդը և խմիչքը պետք է նախատեսված լինեն մեկանգամյա մատուցման համար:
- Ձեռքով պատրաստված ուտեստների հյուրասիրություն-ճաշկերույթը, **հնարավորության դեպքում, պետք է** կատարվի բացօթյա տարածքում:
- Սեղանի շուրջ ճաշել. **Անհրաժեշտ է ճաշել միայն ճաշելու համար նախատեսված տարածքներում:** Խորհուրդ է տրվում ունենալ անձնակազմի և աշխատակազմի ուտելու հերթափոխեր՝ քիչ մարդկանցով: Ուտելու համար նախատեսված տարածքը պետք է լինի այնքան մեծ, որ թույլ տա ճաշող մարդկանց միջև պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն և **հնարավորության դեպքում՝ ճաշել բացօթյա տարածքում:** Այլապես, դերասանական կազմը և անձնակազմը կարող են ճաշել միայնակ փակ սենյակներում: Չի խրախուսվում ճաշել փակ տարածքներում, սակայն այն կարող է թույլատրվել զբաղվածության հետևյալ սահմանափակումներով.
 - **Կարմիր Կարգ (Red Tier).** Փակ տարածքում ճաշելու համար նախատեսված տարածքի առավելագույն զբաղվածության 25%-ի չափով կամ 100 անձանցով, որը որ ավելի քիչ է
 - **Նարնջագույն Կարգ (Orange Tier).** Փակ տարածքում ճաշելու համար նախատեսված

տարածքի առավելագույն զբաղվածության 50%-ի չափով կամ 200 անձանցով, որը որ ավելի քիչ է

- Զբաղվածությունը պետք է նվազեցվի և աշխատակիցների միջև հեռավորությունը պետք է հասցվի առավելագույնի յուրաքանչյուր սենյակում կամ տարածքում, որն օգտագործվում է աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա կարելի է իրագործել հետևյալ կերպ.
 - Ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում տեղադրել ցուցանակներ, որոնք կտեղեկացնեն առավելագույն զբաղվածության մասին, որը համապատասխանում է անձանց միջև թույլատրվող առնվազն վեց ոտնաչափ հեռավորությանը:
 - Դասակարգել ընդմիջումների կամ ճաշելու ժամերը՝ նվազեցնելու զբաղվածությունն այն սենյակներում և տարածքներում, որոնք օգտագործվում են ճաշելու կամ ընդմիջումների համար, և
 - Տեղադրել սեղաններն իրարից առնվազն ութ ոտնաչափ հեռավորությամբ և նստատեղերի միջև ապահովել առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն, հեռացնել կամ ժապավենով նշել նստատեղերը՝ նվազեցնելու զբաղվածությունը, հատակին անել նշումներ՝ ապահովելու հեռավորության պահպանումը, և դասակարգել նստատեղերն այնպես, որ նվազեցվի դեմ առ դեմ շփումը: Խրախուսվում է պատենշների կիրառումը վարակի լրացուցիչ տարածումը կանխելու համար, սակայն դրանք չպետք է համարվեն փոխարինող տարբերակներ՝ զբաղվածության նվազեցմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը:
- Ընդմիջումներ Հիդրատացիայի Համար. Թույլատրվում է հանել դիմակները կարճ ժամանակով արտադրության մյուս տարածքներում՝ միայն կարճ ժամանակով ջուր կամ այլ հեղուկ խմելու նպատակով: Անձը պետք է մյուսներից գտնվի առնվազն 12 ոտնաչափ հեռավորության վրա և անմիջապես կրի դիմակը: Խորհուրդ է տրվում, որպեսզի հիդրատացիայի համար ընդմիջումների այդ տարածքները նախապես որոշված լինեն:
- Պետք է պահպանվեն սննդի ծառայություններին առնչվող Հանրային Առողջապահության բոլոր լրացուցիչ Պահանջները:
- Անձի կողմից բերված ցանկացած ուտեստ պետք է պիտակավորվի և չի կարելի հյուրասիրել այլ անձի:
- Մնուկներ և ըմպելիքները կարող են սպառվել միայն նախատեսված տարածքներում կամ փակ սենյակներում (երբ անձը մենակ է): Անձինք պետք է մշտապես կրեն դիմակներ այլ վայրերում գտնվելիս:
- Եթե ջուրը մատակարարվում է ջրի դիսպենսերների միջոցով, ապա դիսպենսերի լծակները և կոճակները պետք է մաքրվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո: Նախընտրելի է, որպեսզի ըմպելիքները մատուցվի մեկանգամյա օգտագործման տարաներով:

J. ԶԳԵՍԱՊԱՀԱՐԱՆ, ՄԱՋԵՐԻ ՀԱՐԴԱՐՈՒՄ ԵՎ ԴԻՄԱՀԱՐԴԱՐՈՒՄ

- Տվյալ ծառայությունների համար տրամադրվող գործնական աջակցությունը պետք է սահմանափակվի միայն անձնակազմի անդամներով, որոնց անհրաժեշտ են այդ ծառայությունները, սակայն նրանք դա ինքնուրույն անել չեն կարող:
- Դերասանները և աշխատակազմի անդամները պետք է լվանան կամ ախտահանեն իրենց ձեռքերը մինչև սանրվածքին կամ հագուստին առնչվող գործողություններին անցնելը և այդ գործողությունների ընթացքում հնարավորինս շատ կրեն դիմակներ: Դիմահարդարումը



կատարելու ընթացքում, քանի որ **դիմակ** հնարավոր չէ կրել, դերասանը պետք է հնարավորինս լուռ մնա՝ խոսելու միջոցով կաթիլների փոխանցումից խուսափելու համար:

- Աշխատակազմի անդամները, որոնք մշտապես աշխատում են վեց ոտնաչափի սահմաններում անձնակազմի անդամի կամ դերասանի հետ, ովքեր **դիմակներ** չեն կրում (օր.՝ վարսահարդարում կամ դիմահարդարում են կատարում, կամ օգնում են հագուստի հարցերով) պետք է **դիմակին** զուգահեռ կրեն նաև երկրորդական պատնեշ (օր.՝ դեմքի վահան կամ պաշտպանիչ ակնոցներ): Բոլոր աշխատողները պետք է նվազագույնի հասցնեն մյուս անձանց հետ վեց ոտնաչափի սահմաններում անցկացվող ժամանակը:
- Տվյալ գործողությունների ամսաթվի, ժամանակի և մասնակցող անձնակազմի անդամների մասին պետք է կատարվեն գրառումներ՝ հետագա հղման համար, եթե անձնակազմի անդամը կամ հագուստի/սանրվածքի ծառայություն տրամադրող անձնակազմի անդամը վարակվի COVID-19-ով:

K. ՏԵՂԱՆՔԻ ԶՆՆՈՒՄ ԵՎ ՆՎԱՐԱՀԱՆՈՒՄ

- Զննումը պետք է կատարվի վիրտուալ տարբերակով, կամ հնարավորության դեպքում, պետք է վստահել տեղանքի առկա լուսանկարներին:
- Տեղանքները պետք է ամբողջովին պաշտպանված լինեն՝ կանխելու հանրության կողմից հասանելիությունը տեղանքին: Տեղանքները պետք է լինեն հեռու, ցանկապատված կամ այլապես լավ պաշտպանված հանրությունից:
- Տեղանքները պետք է ունենան բավարար տարածություն՝ թույլատրելու ֆիզիկական հեռավորության պահպանումն ամբողջ անձնակազմի և դերասանների համար, ինչպես նաև վերահսկվող և ընդհանուր տարածքներում, նկարահանմանը հետևելու համար նախատեսված տարածքներում, ձեռքով պատրաստված ծառայությունների մատուցման/ճաշելու և այլ աշխատանքային տարածքներում:
- Տեղանքի վարձակալման կամ տեղանքի հասանելի դառնալու ժամանակահատվածը պետք է ընտրվի այնպես, որ տարածք ապահով մուտք գործելու համար տրամադրվի լրացուցիչ ժամանակ, ինչպես նաև լրացուցիչ ժամանակ ձեռքերի հիգիենայի ապահովման և մակերեսների կրկնակի ախտահանման համար:
- Բացօթյա կամ մեծ փակ տարածքները, ըստ էության, ավելի անվտանգ են ֆիզիկական հեռավորության պահպանմանը և /կամ օդափոխության ապահովմանը հասնելու ավելի մեծ հնարավորության շնորհիվ: Չի կարելի օգտագործել փոքր փակ տարածքները՝ առանց համապատասխան օդափոխության:
- Մինչև նկարահանումները սկսելը, պետք է կազմվի աշխատանքային գործընթացի և COVID-19-ի անվտանգության վերաբերյալ արձանագրություն և տրամադրվի տեղում գտնվող դերասաններին և անձնակազմի անդամներին:
- Նկարահանմանը մասնակցող բոլոր դերասանների և ամբողջ անձնակազմի մասին պետք է պահպանվի ցուցակ, եթե անհրաժեշտություն առաջանա հետևելու անձի կոնտակտներին՝ դերասանների կամ անձնակազմի շրջանում վարակման կամ վիրուսային դրական թեստի դեպքում:
- Անձանց միջև պետք է պահպանվի առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն տեսախցիկից դուրս գտնվող բոլոր տարածքներում՝ ներառյալ դերասանների և անձնակազմի կողմից վերահսկվող և ընդհանուր տարածքներում: Տրամադրեք լրացուցիչ տարածքներ, սարքավորումներ (օրինակ՝ նկարահանմանը հետևելու համար անհրաժեշտ էկրաններ), որպեսզի հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Նկարահանման հրապարակում ցանկացած ժամանակ պետք է գտնվեն միայն գլխավոր դերասանները և աշխատակազմի հիմնական անդամները և պետք է ֆիզիկական հեռավորություն



պահպանեն:

- Եթե նկարահանման տարածքների միջև անհրաժեշտ է փոխադրամիջոց, հնարավորության դեպքում օգտվեք շատ ուղևորներ տեղափոխելու հնարավորություն ունեցող փոխադրամիջոցից թույլատրելու վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը: Հաստատեք ուղևորափոխադրման տարողության թիվը և փակցրեք այն փոխադրամիջոցի կողային հատվածում: Անհրաժեշտության դեպքում կատարեք ավելի շատ թվով ուղևորափոխադրումներ՝ ավելի քիչ թվով ուղևորներով: Բոլոր ուղևորներից (ներառյալ դերասանները) և վարորդից պահանջեք կրել **դիմակներ**, եթե հնարավոր է, ուղևորության ընթացքում բաց թողեք պատուհանները:
- Տեսախցիկից այն կողմ աշխատող անձնակազմի բոլոր անդամները պետք է կրեն **դիմակներ** աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում:
- Ամբողջ անձնակազմը և աշխատակազմը պետք է գտնվեն տեղանքում աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում՝ ներառյալ բոլոր ընդմիջումներին:
- Տեղում բոլոր նկարահանումները պետք է կատարվեն առավոտյան ժամը 7-ից 22-ն ընկած ժամանակահատվածում՝ հնարավորինս պահպանելով գործունեություն իրականացնելու համար նախատեսված համապատասխան ժամերը:

L. ԿԻՆՈՅԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

- Ամբողջովին հեռավար/վիրտուալ աշխատանքից, կամ նկարահանումից, կամ ձայնագրումից բաղկացած արտադրությունները, որոնք չեն նախատեսում շփում դերասանական կազմի, աշխատակազմի և երաժիշտների միջև, ամենաապահով են և պետք է առաջնայնություն ունենան:
- Արտադրությունը պետք է համապատասխանի սույն ցանկում կարգավորվող ՏԵՂՈՒՄ ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ և ՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՄԱՆ հետ կապված բոլոր մյուս պահանջներին:

Արձանագրության վերին հատվածում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է թվարկվի առանձին էջերի վրա, որոնք բիզնես-ձեռնարկությունը պետք է կցի սույն փաստաթղթին:

Սույն արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի Կոնտակտային Անձի
Անունը _____

Հեռախոսահամարը՝ _____

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ _____